Հավելված N 2
ՀՀ կառավարության 2021 թվականի
հուլիսի 1-ի N 1089 - Ն որոշման

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿՈԼԵԳԻԱ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2016 թվականի **N 9** քաղ. Մոսկվա

ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՑԱՆԿԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ՆԵՐԱՌՈՒՄ ԵՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ) ԵՎ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ԱՅՆ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՆՄՈՒՇՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ «ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ (ՄՄ ՏԿ 035/2014) ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման» արձանագրության 4-րդ կետին («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի N 9 հավելված) և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի N 2 հավելվածի 5-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան որոշեց.

1. Հաստատել ստանդարտների ցանկը, որոնք ներառում են հետազոտությունների (փորձարկումների) և չափումների այն կանոններն ու մեթոդները, այդ թվում՝ նմուշների ընտրության այն կանոնները, որոնք անհրաժեշտ են «Ծխախոտային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 035/2014) պահանջները կիրառելու և կատարելու

և տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատում իրականացնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
նախագահ՝ **Վ. Խրիստենկո**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հունվարի 26-ի
N 9 որոշմամբ

ՑԱՆԿ

Այն ստանդարտների, որոնք ներառում են հետազոտությունների (փորձարկումների) և չափումների այն կանոնները և մեթոդները, այդ թվում՝ նմուշների ընտրության այն կանոնները, որոնք անհրաժեշտ են «Ծխախոտային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 035/2014) պահանջները կիրառելու և կատարելու և տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատում իրականացնելու համար

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը	Ստանդարտի անվանումը	Ծանո-թագրու-թյուն
1	2	3	4	5
1.	Բաժին II	ԳOUS ISO12863-2013	Սիգարետներ. Բոցավառվելու ունակությունը գնահատելու փորձարկման ստանդարտ մեթոդ	
2.		ՉԿՄ 01-2009	Ծխամորճի և մանր կտրատած ծխելու ծխախոտի մանրաթելերի լայնության չափումների կատարման մեթոդիկա	
3.		ՉԿՄ 02-2009	Սիգարների և սիգարիլլաների հաստության չափումների կատարման մեթոդիկա	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը	Ստանդարտի անվանումը	Ծանո-թագրու-թյուն
1	2	3	4	5
4.	Բաժին VIII	ԳՕՍՏ 31632-2012 (ISO 8243:2006)	Սիգարետներ. Փորձանմուշների ընտրությունը	
5.		ԳՕՍՏ ԻՍՕ 3402-2003	Ծխախոտ և ծխախոտային արտադրատեսակներ. Լավորակման և փորձարկումների անցկացման համար միջավայրներ	
6.		ԳՕՍՏ ԻՍՕ 3308-2003	Մեքենա՝ սովորական լաբորատոր՝ սիգարետ ծխելու համար (ծխելու մեքենա). Սահմանումներ և ստանդարտ պայմաններ	Կիրառվում է ՄԻՆՉԵՎ 2017 թվականի հունվարի 1-ը
7.		ԳՕՍՏ ԻՍՕ 3308-2015	Մեքենա՝ սովորական լաբորատոր՝ սիգարետ ծխելու համար (ծխելու մեքենա). Սահմանումներ և ստանդարտ պայմաններ	կիրառվում է 2017 թվականի հունվարի 1-ից
8.		ԳՕՍՏ 30571-2003 (ԻՍՕ 4387:2000)	Սիգարետներ. Սիգարետների ծխում խոնավ և նիկոտին չպարունակող չոր խտուցքի (խեժի) պարունակության որոշումը՝ լաբորատոր ծխելու մեքենայի օգնությամբ	
9.		ԳՕՍՏ 30622.1-2003 (ԻՍՕ 10362-1:1999)	Սիգարետներ. Ծխի խտուցքում ջրի	

Համարը՝ ը/կ	Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը	Ստանդարտի նշագիրը	Ստանդարտի անվանումը	Ծանո-թագրու-թյուն
1	2	3	4	5
			պարունակության որոշումը. Գազային քրոմատագրման մեթոդ	
10.		ԳՕՍՏ 30570-2003 (ԻՍՕ 10315:2000)	Սիգարետներ. Ծխի խտուցքում նիկոտինի պարունակության որոշումը. Գազային քրոմատագրման մեթոդ	կիրառվում է մինչև 2017 թվականի հունվարի 1-ը
11.		ԳՕՍՏ 30570-2015 (ISO 10315:2013)	Սիգարետներ. Ծխի խտուցքում նիկոտինի պարունակության որոշումը. Գազային քրոմատագրման մեթոդ	կիրառվում է 2017 թվականի հունվարի 1-ից
12.		ԳՕՍՏ 31630-2012 (ISO 8454:2007)	Սիգարետներ. Սիգարետի ծխի գազային ֆազում ածխածնի մոնոօքսիդի պարունակության որոշումը՝ ոչ դիսպերսային (NDIR) ինֆրակարմիր անալիզատորի օգնությամբ	
13.		ԳՕՍՏ 31629-2012 (ISO 16055:2003)	Ծխախոտ և ծխախոտային արտադրատեսակներ. Ստուգիչ նմուշ. Պահանջ և կիրառում	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

01.07.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ